

ՀՈՒՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЫИ И СООБЩЕНИЯ

ԱՆՄԱՀ ԿՈՔՋԱՐԸ

(Տ. Գ. Շևչենկոյի ծննդյան 150-ամյակի առթիվ)

ՍՍՍՐ ՊԱ քղրակից-անդամ Ն. Զ. ԲելՉիկով (Մոսկվա)

Մաղկող Սովետական Ուկրաինայի ջինջ երկնքի տակ հսկարտ խոյանում է ուկրաինական ժողովրդի մեծ զավակ Տարաս Գրիգորևիչ Շևչենկոյի հուշարձանը: Այն կանգնեցվել է Կիևում, 1939 թվականին, մեծ բանաստեղծ-հեղափոխականի, բոցաշունչ հայրենասերի, ուկրաինական և բոլոր ճնշված ժողովուրդների ազատության համար պայքարող մարտիկի ծննդյան 125-ամյակի կապակցությամբ: Հուշարձանը մեծ բանաստեղծի նկատմամբ ժողովրդի ունեցած սիրո արտահայտությունն է, նրա վաստակի ճանաչման վկայությունը բազմազգ Սովետական Միության բոլոր եղբայրական ռեսպուբլիկաների կողմից: Հուշարձանը գրանիտից է, սակայն անհամեմատ ավելի ամուր հուշարձան է ստեղծվել մարդկանց սրտում: Շևչենկոն իր պոեզիայով և իր կյանքով մնացել է ողջ առաջագիմ մարդկության և շնորհակալ սերունդների հիշողության մեջ:

Շևչենկոյի ունյուցիոն ազնիվ սխրանքի հանդեպ հարգանքի ու երախտագիտության զգացմունքներ են տածում և մեր ժամանակի մարդիկ: Սովետական ժողովուրդը երբեք չի մոռանա հռչակավոր Կոբչարին: Շևչենկոյի զաղափարներն ու երազանքները ժողովուրդների բարեկամության ու եղբայրության, ժողովրդական հեղափոխության և աշխարհի բոլոր ժողովուրդներին ճնշումից ու շահագործումից ազատագրելու մասին, որ այնքան ոգեշնչված ու բանաստեղծորեն արտահայտված են նրա գեղարվեստական երկերում, հարազատ են մեզ: Շևչենկոն թանկ է սովետական բոլոր ժողովուրդների համար: «Տարաս Գրիգորևիչ Շևչենկոն,—ասել է Ն. Ս. Խրուշչովը 1939 թ. Կիևում հուշարձանի բացման ժամանակ,—մոտ ու թանկ է մեր մեծ Հայրենիքի բոլոր ժողովուրդներին, որովհետև նա իր ստեղծագործություններում արտահայտել է ոչ միայն ուկրաինական շքավորության, այլև բոլոր ազգերի աշխատավորության խոհերը»¹:

1

Մեր գրականության բնորոշ առանձնահատկությունը նրա անխզելի կապն է ազատագրական պայքարի հետ: Մեր գրականությունը ուշագրավ է իր խոր գեմոկրատիզմով, մարդասիրությամբ, հայրենասիրությամբ, զաղափարայնությամբ և ժողովրդական զանգվածների հետ ունեցած կենդանի կապով:

¹ «Правда», 7 марта, 1939, № 65.

Ռուսաստանի աշխատավոր ժողովրդի կյանքն ու ազատագրական պայքարը աղբյուր հանդիսացան, սնուցարար հող դարձան առաջադեմ ուսուցիչական գեղարվեստական դրականության զարգացման համար: Ցարական Ռուսաստանում հասունանում էին ժողովրդական հզոր ուժեր, որոնք ոգեշնչում էին լավագույնը գրողներին պայքարի ելնելու ճորտատիրական իրավունքի դեմ, ներշնչում ազատագրական ու հեղափոխական տրամադրություններ: Հակառակ ցարական դրաքննության, որը դաժանորեն հետապնդում էր ամեն մի բողոք, ժողովրդի պաշտպանության համար ասված ամեն մի խոսք, դրականության մեջ համառորեն ու անվախ երևան էր գալիս ազատ միտքը: Մեր նշանավոր գրողները իրենց գեղարվեստական ստեղծագործություններում համարձակորեն առաջ էին քաշում սոցիալական կենսահույս հարցերը: Գերցենը գրել է, որ «բաղաճական ազատություն չունեցող ժողովրդի համար դրականությունը միակ ամբիոնն է, որի բարձրությունից նա կարող է ստիպել լսելու իր զայրույթի և իր խղճի ճիշդ»²:

Ռուսական կյանքը և՛ հասարակական տրամադրությունների վերլիքի տարիներին, և՛ դաժան ուսակցիայի ժամանակաշրջանում ստեղծել է Պուշկինի, Լեմոնտովի, Նեկրասովի և բազմաթիվ այլ գրողների, այդ թվում և Շեչենկոյի պոեզիայի վառ, անմահ ստեղծագործությունները: Գրողներից ոմանք բողոքի էին ելնում ցարիզմի և թագավորների ինքնիշխանության դեմ, մարտնչում էին ժողովրդական մասսաների ազատագրման համար: Մյուսները գովերգում էին հեղափոխությունը և սեփական կյանքով ապացուցեցին իրենց հավատարմությունը ժողովրդի ազատագրման գործին: Այսպիսին էր պոետ-ռեոլյուցիոներ Շեչենկոն, որն իր հեղափոխական համոզմունքների համար բանտարկվեց, արստրվեց և որպես շարքային զինվոր տարիներ շարունակ ծառայեց հեռավոր Նուր-Պետրովյան ամրոցում:


Ցար Նիկոլայը հանդես եկավ, ինչպես միշտ, դահճի դերում: Հայտնի է, որ նա անձամբ հարցաքննել է ղեկաբրիստներին, հետևել է պետրաշևականների հարցաքննություններին, Կիրիլ-Մեֆոդիևյան բնակրության դատաքննության րնթացքին: Վերջինիս հետ կապեր է ունեցել նաև Շեչենկոն: Ցարի հրամանով ղեկաբրիստները կախաղան հանվեցին, կառափնարան տարվեցին պետրաշևականները: Նիկոլայ 1-ը Շեչենկոյին դարձնում է «արստրված սալ-դատ» և զրկում նրան գրելու ու նկարելու հնարավորությունից: Մեծ տաղանդի տեր բանաստեղծի և նկարչի համար դա մի շտեմնված ծանր պատիժ էր: Ցարական արգելքը բացահայտորեն նպատակ ուներ ոչնչացնել հանճարեղ մարդուն, որն այդ ժամանակ հսկայական քայլերով առաջ էր րնթանում իր քաղաքական ու գեղարվեստական զարգացման ուղիով:

Զի կարելի անտարբեր կերպով կարդալ Շեչենկոյի «Օրագրի» այն էջերը, որտեղ նա խոսում է իր պատժի մասին. «Նթե ևս լինեի արյունարբու ճիվաղ, ապա այն ժամանակ էլ ինձ համար ավելի հաջող պատիժ չէր կարելի հնարել, քան Օրենբուրգյան առանձին գորամաս, որպես շարքային զինվոր, ինձ արստրելու: Ահա թե որն է իմ անպատմելի տառապանքների պատճառը: Այդ բոլորի հետ մեկտեղ ինձ արգելված է նաև նկարել. հափշտակել իմ թշվառ գոյություն միակ իմաստը: Սատանայի նախադահույթյամբ գործող դատարանն անգամ չէր կարող հանել այդպիսի սառը, անմարդկային դատավճիռ: Իսկ դա-

² А. И. Герцен. Полн. собр. соч. и писем, т. VI, 1919, т. 350.

տալճոի անհույի կատարածունները կատարեցին այն վրդովեցուցիչ ճշգրտութեամբ»:

10 տարի, 3 ամիս և 27 օր է տևել Շեչենկոյի արքայութիւնը, որից յոթ տարին նա անց է կացրել զրոյի խոսքերով ասած՝ «չփակված բանտում»—Կասպից



ծովի անմարդարնակ ամրոցում: Ո՛չ բանտարկութիւնը, ո՛չ էլ III բաժանմունքի կազմատուր շրնկճեցին Տարասին: Բնավ չխոնարհվեց բանաստեղծը բռնակալի «ամենազորութեան» առջև, չկորցրեց հոգու հանգստութիւնն ու կամքի ամրութիւնը: Արքայութեան նա անդադար պայքար էր վարում իր՝ որպէս հեղափոխականի արժանապատիւութիւնը պահպանելու համար:

Ազատութեան և կյանքի ծարավը, բոլորի երջանկութեան ծարավը՝ ահա ցարիզմի դէմ պայքարող Շեչենկոյի ուժի և տոկունութեան աղբյուրը: Նրա արիութեանը և կենսունակութեանը խթանում էր նաև ժողովրդի հետ ունեցած սերտ կապի զիտակցութիւնը: Նույնիսկ արքայութեան, անհույս տառապանքների տարիներին, Շեչենկոն, հակառակ ցարական արգելքի, զրում է բանաստեղծութիւններ, որոնցում հիշում է հարազատ Ուկրաինան և պատկերում ստրկացած զյուդացիական զանգվածների ներկայացուցիչներին:

Բանաստեղծի՝ «շղթայված զաւակի» սեփական բախտը, որն իր արտահայտութիւնն է գտել նրա արքայութեան ժամանակաշրջանի շատ բանաստեղծութիւններում (1847—1848 թթ.) և կազակի կերպարը, որ ներկայացված է 1850 թ. զրված «Պատահել է, որ զերութեան մեջ երազել եմ սկսում» բանաստեղծութեան մեջ խորհրդանշել են հարազատ ժողովուրդը, որի պատմութիւնը

հարուստ է հողի և ագատություն համար օտարերկրյա գավթիչների և ֆեոդալ հարստահարիչների դեմ ուղղված անձնագոհ հերոսական պայքարի էջերով:

Ջինվորի ագատագուրկ կյանքը Շևչենկոյի հոգում խոր գայություն էր առաջացնում: Նա իր մեջ ուժ գտավ դիմադրելու, կարողացավ արհամարհանքով անցնել այդ երկար, փշոտ ճանապարհը՝ չհրաժարվելով իր համոզմունքներից: «Վավերացված վ. իոն ինձ հայտնելու անմոռանալի օրը ես ինքս ինձ ասացի, որ ինձ «սալդատ» չեն դարձնի: Եվ չդարձրին», — անկեղծորեն գրել է իր «Յոթ-դրոմ» Շևչենկոն 1857 թ. հունիսի 13-ին: Իսկ 1857 թ. հուլիսի 28-ին նա ավելի էս համարձակորեն գրում է, որ պահպանել է «եղու և մարմնի ուժը» մոռաց, «չփակված բանտում», «չստորացնելով իր մեջ մարդկային արժանապատվությունը»:

Ժանդարմներին չհաջողվեց մեղադրել Շևչենկոյին կիրիլո-Մեֆոդիևյան բնկերությունը մասնակցություն ունենալու մեջ: Ասենք դա հաղիվ թե պետք էր ցարին և նրա սատարայիններին: Խուզարկության ժամանակ Շևչենկոյի մոտ հայտնաբերված ձեռագիր «Երազ» պոեմը (1844), որը լցված էր ցարիզմի և ճորտատեր-կալվածատերերի դեմ ուղղված ատելությամբ, նիկոլայ 1-ի և նրա ծառաների համար շատ ավելի վտանգավոր էր, քան կիրիլո-մեֆոդիևսկաների երազանքները: III բաժանմունքում պոեմը զնահատեցին որպես վիրավորանք ցարի և թագուհու հասցեին և նրանում տեսան գոյություն ունեցող կարգի դատապարտում: Եթե հիշենք, որ պոեմը Շևչենկոյի բանտարկության ժամանակ (1847 թ. ապրիլի 5) մեծ չափով տարածվել էր ձեռագիր օրինակներով: Կիևում, Պոլտավայում, Մոսկվայում, Օդեսայում, Պետերբուրգում, Բելոռուսիայում, այսպես ասելով կրիսի, թե ինչու էին այնքան անհանգստացած ժանդարմներն այդ ստեղծագործությամբ, որտեղ ուղղակի ցույց էր տրվում, թե ո՞վ է մեղավոր աշխատավորների ծանր վիճակի համար:

Շևչենկոյի կողերը չմնացին անպատասխան: III բաժանմունքի հայտնի դորձակալ Ի. Պ. Լիպրանցին 1848 թ. ստիպված էր խոստովանել, որ Ուկրաինայում «մաքերը խմորման մեջ են Շևչենկոյի ստեղծագործություններով շանված սերմերից»: Այսպիսով, մեծ բանաստեղծը դարձավ այն մարտիկը, որը անվախ ու համարձակ հանդես եկավ ցարիզմի և կալվածատիրության դեմ, տարավ բարոյական ու բաղադրական հաղթանակ և շղաղարեց քարոզել հեղափոխական մտքեր իր անմահ բանաստեղծությունների մեջ:

2

Շևչենկոյի պոեզիան սկզբից եկավ, երբ 1840 թ. լույս տեսավ «Կոբզար» առաջին ժողովածուն, հուլիս տպավորություն թողեց ժամանակակիցների վրա: «Կոբզար» արագությամբ ժողովրդայնություն ձևեր բերեց, նրա մասին համակրական գրախոսություններ լույս տեսան առաջադիմական հանդեսներում, նա մեծ խանդավառություն առաջացրեց համերկրացիների մոտ: Ի. Լ. Մետլիսկին 1840 թ. օգոստոսի 26-ին Ի. Ի. Սրեզնևսկուն գրած նամակում հայտնում էր «Բանաստեղծ Շևչենկոյի արտասուրդ ձիրքի» մասին: Մերունի Գ. Ֆ. Կվիտկո-Օսնովյանսկին 1840 թ. հոկտեմբերի 23-ին հիացած գրել է «Կոբզարի» հեղինակին. «Այսպես կարգավ բանաստեղծություններ... ահա թե ինչ. գլխիս մազերը, որ արդեն շատ չեն, բիզ-բիզ կանգնեցին: Կինս լալիս է: Ես ձեր գիրքը կրճրիս սեղմեցի: Լավ է, շատ լավ... Ավելին չեմ կարող ասել»:

Շեչենկոյի բանաստեղծությունները ժողովրդի սեփականությունը դարձան: «Կորգարր» կարդում էին և՛ աղնվականների հյուրասենյակներում, և՛ գյուղական խրճիթների տանիքի տակ: Ժամանակակիցներից մեկի վկայությամբ «Կորգարր» շուտով դարձավ ճորտ սպասավորների սիրելի գիրքը: Կալվածատիրուհի Սուխանովայի ծառաները, օրինակ, անգիր գիտեին նրա բանաստեղծությունները:

1843 թ. ուկրաինական պաները, ինչպես իրենց հիշողություններում պատմում են նշանավոր դրող ու ազգագրագետ Ա. Չուբրինսկին և Ա. Կաղաչկովսկին, բանաստեղծին «փայլուն բնդունելություն» ցույց տվեցին: Սակայն բանաստեղծի կենսագիր Մ. Կ. Չալին հեղնանքով ավելացնում է, որ «հյուրասեր կալվածատերերը» պատվում էին այն ժամանակ արդեն հայտնի դարձած բանաստեղծին «ավելի շուտ սնափառությունից զրդված, կամ թե մողայից ելնելով»:

Բայց ինչքան լրիվ ու խորն էր արտահայտում Շեչենկոն իր բանաստեղծություններում ղեմկրատական ու հեղափոխական գաղափարները, այնքան ավելի արագ էր տեղի ունենում նրա բարեկամների ու համախոհների սահմանադատումը՝ յաղափարական հակառակորդներից: Բանաստեղծությունների ստաջին ժողովածուն գերազանցապես քնարերգական էր, մի հանգամանք, որ կարող էր թուլացնել ժողովրդի նկատմամբ բանաստեղծի ցուցարերած կարեկցության և նրա ճնշողների հանդեպ արտահայտած մեղադրանքի տպավորությունը: Ժամանակակից ճորտատիրական իրականության նկարագրությունը սուրյակտիվ քնարերգության ժանրով, մասնավորապես Կատերինայի վլադի պատմությունը՝ տրված բարձր ումանտիկական ձևով, մեղմացնում էին ժողովրդի տառապանքի սարսափելի պատկերի քաղաքական իմաստը: Կյանքի նկարագրությունը անկեղծ թարմությամբ, ուկրաինական հմայիչ կոյորիտը և հերոսուհու նկատմամբ հեղինակի ունեցած անմիջական կարեկցությունը չարեցին սոցիալական հակամարտությունը, թեև, այնուամենայնիվ, պատկերվում էր ոչ թե խաղաղ հովվերգություն, այլ երջանկություն ցանկազող հասարակ մարդկանց ձգտումների ու նրանց կյանքի դժնդակ պայմանների միջև եղած կոնֆլիկտը: Սակայն «Իվան Պոդկովա» (1839), «Տարասի գիշերը» (1839) և հատկապես «Հայդամակներ» (1841) պատմական պոեմները, որոնցում Շեչենկոն երգում էր հերոսությունն ու պայքարը ժողովրդի դարավոր թշնամու՝ «վայրագ սլանության» դեմ, խոսում էին բանաստեղծի ազատամտության մասին: Եթե 1840-ական թվականներին, «Հայդամակներ» պոեմի երևան գալու շրջանում, ժամանակակիցները դեռևս չէին կարողացել տեսնել նրա հակաճորտատիրական բնույթը, ապա հետագայում հասկացվեց «Հայդամակներ»-ի և «Տարասի գիշերվա» քաղաքական աստառը: Ե՛վ ուկրաինական նացիոնալիստները, և՛ ժանդարմները խիստ դատապարտեցին այդ պոեմների ունույցիոն բովանդակությունը: Հերոսական անցքերի փայլուն էջերի և ուկրաինական ժողովրդի աղվային-ազատագրական պայքարի վառ զրվադների պատկերումը տաղնապ առաջացրեց ժանդարմների մոտ: «Կարգի պահապաններ» հայտնեցին ցարին, որ կարգալով Շեչենկոյի պոեմները, կանխակալ մտքի տեր մարդիկ՝ հեշտությամբ կարող են զուգահեռ անցկացնել սուլթանական ու ցարական կարգերի միջև, իսկ ազատասեր զապորոժցիների կոչը կդիտեն որպես կոչ բնդդեմ ցարական ինքնակալության:

Շեչենկոն հրեն պարզ հաշիվ էր տալիս իր ստեղծագործությունների բնույթի մասին: Գ. Ս. Տարնովսկուն 1842 թ. մարտի 26-ին ուղղված նամակում նա պատմում էր իր ապրումների մասին, որ ունեցել է զրաքննության պատճառած հետապնդումների հետևանքով. «Ես կարծում եմ, որ Դուք ինձ լավ նախատել եք «Հայդամակների» համար: Մեծ հոգս ունեցա ես դրա համար. մեծ դժվարությամբ բաց թողեց զրաքննչական կոմիտեն, վրդովեցուցի՜ւ է բայց վերջապես, հազիվ, մի կերպ ես նրանց հավատացրի, որ ես խոսվարար չեմ: Հիմա շտապում եմ ցրել, որպեսզի չսթափվեն»:

Ձնայած բանաստեղծի ստեղծագործություններում առկա են անցյալի իդեալականացում (որը հետագա տարիներին ավելի թույլ ձևով արտահայտվեց) և սոցիալական էլեմենտը ազդեցիկին ենթարկելու տենդենցներ, Շեչենկոն պարզ արտահայտել է իր ջերմ մտքերը հարադատ ժողովրդի հզոր ուժայություն սխրանքների մասին: Թույլ որ Շեչենկոն հիանա անցյալի դիրքն անցած հետմանությամբ, վշտանա «խղճուկ ավերակների լռած փառքի» վրա. կուրգանների ու մանտիկական կերպար, որտեղ թաղված են բաջ նախնիների, չէր կարող ծածկել ժամանակակիցների աչքից և մտածմունքներից բանաստեղծի մտադրությունը ուժայություն պայքարի վերաբերյալ: Շեչենկոն բանաստեղծորեն է արտահայտել ժողովրդի հերոսական պայքարը ճնշողների դեմ, որպեսզի «տխուր ուրախությամբ, հիշելով անվախ նախնիների սխրանքները» (Ն. Ա. Գորբույովով), ուղի ցույց տա ծանր ներկայից ազատագրվելու համար: Այսպիսին է Շեչենկոյի պատմականության իմաստը, ազատ կազակության, Զապորոժյան Սևի և առհասարակ ուկրաինական ժողովրդի ամբողջ փառապանծ անցյալի գովերգման իմաստը: Պատմական պոեմներում նա իր ժամանակի ժողովրդական մասսաների հեղափոխական ձգտումները կապել է նախնիների հերոսական սխրագործությունների հետ:

Շեչենկոն շարունակել է ղեկարրիստների տրագիդիաները, հեղափոխականների, որոնք ունեին նույնպիսի հայրենասիրական իդեալ. Ռիլևսի իր պատմական «Խոհերի» մեջ տեսնում էր նույն նպատակը. «Հիշեցնել պատանեկության իր նախնիների սխրագործությունները, ծանոթացնել նրան ժողովրդական պատմության պայծառագույն դարաշրջաններին, սերը հայրենիքի նկատմամբ շողկապել նրա մտքի ու խոհերի առաջին տպավորություններին, — ահա այն միջոցը, որ կարող է ժողովրդին ամուր թելերով կապել հայրենիքի հետ»:

Շեչենկոյի համար կապը ժողովրդի հետ սուրբ և կենսական պործ էր: Ուկրաինական ժողովրդի ուսերին դրված լուծը ստիպեց նրան ուղի գտնել լավ կյանքի համար: Շեչենկոն վաղ հասակից մերժեց «տաք տուլուպը», որ նրան կարող էր տալ ծախու գրչակի ճակատագիր և ղերադասեց դառնալ գյուղացիական չափուրության բանաստեղծ, որոշեց «բարձրացնել թշվառ ու մունջ ստրուկներին» և պայքարել նրանց ևրջանկության համար:

Շեչենկոն վաղ շրջանի իր բանաստեղծություններում հանդես էր գալիս որպես գյուղացիների, բառրակների, ալրիների, խաբվածների ևրդիչ: Հասարակ մարդկանց այս բոլոր կերպարները սովորական էին, անբարեխոս, նույնիսկ խելճ ու անուժ: Բայց նրանց լուսավորել է արվեստագետ հանճարի շուրջ. որի հետևանքով նրանք կերպարանափոխվեցին և մինչև օրս էլ մնացին հմայի: ու հուրիչ: Իսկ նրա խոսվարար բոցաշունչ հայդամակները, ժողովրդի ծոցից ելած այդ անվախ հերոսները. մի՞թե անմոռանալի չեն նրանք, մի՞թե

մեզ չեն հուզում այդ անշահախնդիր, բյուրեղյա սիրտ ունեցող անվախ մարտիկները, որ պայքարում էին օտարերկրյա լծից հայրենիքը ազատագրելու համար: Շեչենկոն շուտ բմբունեց իր քնարերգության ազդեցությունը ժամանակակիցների վրա: Որպես հանճարեղ և իր ժողովրդին նվիրված մարդ, նա շուտ տեսավ իր ուղին և, լինելով հասարակ մարդկանց պաշտպան, ձգտեց արթնացնել իր ժողովրդի ազգային պիտակցությունը:

3

Շեչենկոն գրել սկսեց՝ հենվելով ժողովրդական պոեզիայի անսպառ աղբյուրի վրա: Ժողովրդական պոեզիային դիմելը զրական մոդային տուրք տալու և կամ իր վարպետությունը հարստացնելու միջոց չէր: Ժողովրդական ստեղծագործության մեջ և ժողովրդի ունի կյանքում նա տեսնում էր իր դադափարակից մարդկանց հոգեկան դործունեության ճիշտ ուղին: Շեչենկոյի խաղաղ, նուրբ, մտադրազ ու հուզիչ քնարերգության մեջ յայտնվում են ժողովրդայնության հովերը», գրել է Դորրոյությունը: Բանաստեղծը Ուկրաինային և հարազատ ժողովրդին է նվիրել իր ստեղծագործությունը: Շեչենկոյի երկերում արտահայտվել է ժողովրդի կյանքի ծովը: Նրա պոեզիան «մի ամբողջ ժողովուրդ է, որ խոսում է իր բանաստեղծի շուրթերով», — գիպուկ ասել է նրա ժամանակակիցներից մեկը՝ Ն. Կոստոմարովը: Շեչենկոյի մոտ ուժեղ էր ժողովրդի ազատասիրության տարերային ուժը, որ վսեմացել ու վեհացել էր իր ժամանակի առաջավոր գաղափարներով:

Շեչենկոն դուզակցում էր պոեզիայի ժողովրդական ակունքները ուս և ուկրաինական զրականությունների լավագույն տրադիցիաների հետ, պոեզիայի այնպիսի հսկաների բազմահարուստ փորձի հետ, ինչպիսիք են Պուշկինը, Լերմոնտովը, Բոգոլն ու Շչեգրինը: Նա հարազատ զրականության մեջ ներմուծեց հզոր ունիք, անհայտ կերպարներ, նոր ժանրեր, ցարիզմը և կալվածատիրությունը մերկացնող բանաստեղծի ու սոցիալական ճշմարտության մունետիկ կրքոտ պաթոս:

Հակառակ իր ժամանակի ուժանտիկների իդիլիաներին և նրանց սառը ազդագրությանը, Շեչենկոն աշխարհին հազորդեց ուկրաինական դուզի մասին դուր ճշմարտություն: Ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում, բանաստեղծի հասարակական-քաղաքական համոզմունքների խորացման ժամանակ, որը համընկավ 40-ական թվականներին Ուկրաինայում հեղափոխական տրամադրությունների վերելքի հետ, Շեչենկոյի ունյուցիոն ցասումը հասավ իր գագաթնակետին: Շեչենկոն իր խոսքը ի սպաս դրեց հեղափոխության: Նա գրում է ունյուցիոն պաթոսի ուժով ցնցող բանաստեղծություններ (ս'վ մեռածներին, և՛ ողջներին...», «Կտակ»), որոնցում ժողովրդական հեղափոխության կոչ է անում:

Շեչենկոյի հեղափոխական պիտակցությունը անցյալ դարի 40-ական թվականների ունյուցիոն տրամադրությունների ազդեցության տակ բարձրացավ մի նոր աստիճանի: Մայրաքաղաքում գտնված ժամանակ նա երգում է հեղափոխության մասին: 1845 թ. գալով Ուկրաինա, հափշտակվում է դուզացիական ապստամբությունների մորիկով: Այժմ նա սկսում է հեղափոխության գաղափարները տարածել իրեն «հոգով ու մարմնով մոտիկ տառապյալ ժողովրդի» մեջ, հույս ունենալով, որ «կփայլատակի հոգը անսպա-

սելի սուր զանակներով», այսինքն կիրադործվի ժողովրդական հեղափոխությունը: 1845 թ. Ուկրաինայում դրած մի շարք բանաստեղծություններում՝ «Սուրբատովո», «Սառը Ֆարը», «Դավիդի սաղմոսները», «Մեծ Լոգը», «Կտակը» (եճրը մեռնեմ ես, թաղեցեր ինձ») ժողովրդական բանաստեղծը արտահայտել է ճորտ ղյուլագիների տրամադրությունները, նրանց զայրույթը ճորտատիրության դեմ և հավատը իրենց ազատագրման նկատմամբ:

Вновь восстанет Украина,
Свет правды засветит,
И помолятся на воле
Невольничьи дети!..

(«Սուրբատովո»)

«Կովկաս» պոեմում (1845) Շեչենկոն հասնում է ժողովուրդների բարեկամության և իրավահավասար եղբայրության բարձր պաղափարների ազդարարման: Նրա պոեմը հնչում է որպես ինքնակալության վալթի դործողությունների համարձակ մերկացում: Կովկասյան պատերազմների պատմական նշանակության հարցը չի դրավում բանաստեղծի ուշադրությունը: Դատապարտելով զավթիչ ցարերի «փառքը», Շեչենկոն ջերմ համակրանք է ցույց տալիս լեռնային ժողովուրդներին և նրանց պոլքն է երգում:

Фанф...
Խուլեպեա և ձեզ, մեծ սասկետեր,
Աստուծոց շրմոռացված:
Պայհաբեցեք, հաղթասակեք...
Աստված կօգնի միշտ ձեզ,
Ձեզ հետ կա փառք, արդարություն,
Ազատությունը վեր:

(Թարգմ. Գ. Սարյանի)

Շեչենկոն երգում էր Կովկասը հակառակ ազնվականական հետադիմական գրականության տրադիցիայի, գրականություն, որտեղ ղոլերգվում էին ռուսական զորքերի հաջողությունները և իդեալականացվում Կովկասի էկզոտիկան: Ռուս զրոյներին բշերը միայն, ինչպես, օրինակ, Լերմոնտովն ու Պուշկինը, բարձրացան մինչև ցարիզմի զավթողական բաղաբականության մոալլ կողմերը հասկանալու աստիճանին: Շեչենկոն ցույց տվեց, որ ցարական Ռուսաստանը հավասարապես բանտ էր նրա կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդների համար: Ցարիզմի նկատմամբ կծու ծաղրանքով լեցուն իր բանաստեղծություններում Շեչենկոն պատկերում էր ժողովուրդների այդ բանտը:

Իսկ բանտեր... մադիկ... կան... հազաբենեով...
Մոլղավագուց միեշ ֆիեներ բոլոր...
Լուռ են բոլոր ողբ լեզուներով...
Քանի որ երանք շատ են բախտավոր...:

(Թարգմ. Գ. Սարյանի)

Հետաբրբական է, որ Չերնիշևսկին իր «Ապպային անտակալություն» (1861) հոգվածում, որպեսզի թմբեցնի գրաբնությունը և միևնույն ժամանակ ընթերցողին հասկացնել սա իր ալլաբանության բաղաբական իմաստը, օգտագործել է Շեչենկոյի հենց այս խոսքերը:

Նրգելով ժողովուրդների միասնությունը, Շեչենկոն ստեղծել է անմահ Պրոմեթևսի դյուխիչ կերպարը՝ որպես ժողովրդի հզորության և կամքի խորհրդանշ։ Անհաղթ այդ կերպարը, որի դեմ անգոր է ինքնիշխանության սև արծիվը, գրավում էր շատերի, նախ և առաջ Շեչենկոյի այն ժամանակակիցների սրտերը, որոնք բաժանում էին բանաստեղծի հեղափոխական գաղափարները։

Այնտեղ հեռից Պրոմեթևսին
Արծիվն է միշտ պատմում...
Ու սիրան է հռչակում.
Հռչակում է. բայց կենաւաւ
Արշունը չի խմում,
Սիրտը նորից կյանք է առնում,
Նորից է ծիծաղում:
Չի մահանա և մեռ հոգին,
Ազատությունը վես...
Նվ կենդանի խոսքն ու հոգին
Չես շղթայի դու, ո՛չ...:

(Թարգմ. Բ. Սարյանի)

Ժողովուրդների միասնության մեջ է տեսել Շեչենկոն ազատագրության ուղին և արդարամիտ հասարակական կարգի ստեղծման ճանապարհը։ Նա իր «Հերետիկոսը» պոեմում (1845) գովերգել է սլավոնական բոլոր ժողովուրդների ունույնացիոն միասնությունը։ Պոեմում ուկրաինական բանաստեղծը իր ինտերնացիոնալ համակրանքն է արտահայտել չեխ, ինչպես և մյուս ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ։ Բր նշանավոր «Կտակում» Շեչենկոն ցարիզմի մոայլ բանտից անվախ կոչ էր անում ժամանակակիցներին և գալիք սերունդներին՝ հեղափոխություն կատարել և ստեղծել նոր արդարացի հասարակարգ։

Թաղեցեմ ու ելեմ ոտքի,
Շղթաները կտրեմ.
Նվ քշեմու չառ արշուճով
Ազատություն ցողեմ...

(Թարգմ. Գ. Սարյանի)

Մեծ Կորգարի բանաստեղծությունները հիացրել են ժամանակակիցներից շատերին։ Պետրաշևականները իրենց պրոպագանդայում օգտագործեցին «Կովկաս» պոեմը։ «Հերետիկոսը» պոեմից առանձին հատվածներ էին երգում Պետերբուրգի համալսարանի ուսանողները, երբ 1861 թ. գնում էին Պետրոպոլիսյան ամրոցի կազեմատները։ «Կտակը», որ հեղափոխական հիմն է դարձել շատ սերունդների համար, իր բարերար ազդեցությունն է ունեցել XIX դարի երկրորդ կեսի մի շարք բանաստեղծների ստեղծագործության վրա։ Շեչենկոյի քաղաքական բանաստեղծությունները չէին կարող լույս տեսնել գրաքննությանը ենթակա մամուլում։ Ընդամենը 40 բանաստեղծություն (այսինքն բանաստեղծի գրածների մեկ հինգերորդ մասը) հրապարակվեց բանաստեղծի կենդանության օրոք։ Սակայն Շեչենկոյի արգելված բանաստեղծությունները լայնորեն տարածվում էին ձեռագիր օրինակներով։ Բր ժամանակ գաղտնի մնացին 1860-ական թվականներին՝ աքսորից վերադառնալուց հետո Շեչենկոյի գրած բանաստեղծությունները։

4

Նրկարամյա արսորը շտատանեց և շթույացրեց Շեչենկոյի հեղափոխական համոզմունքները: Նա մնաց ցարիզմի և կալվածատիրության դեմ պայքարող աննկուն մարտիկ: Շեչենկոն, որպես մեծ հումանիստ, ապրում էր աշխարհի ժողովուրդների հետ հարազատ կապերի զգացմունքներով և քաղաքական համախոհություն էր ցուցաբերում Ռուսաստանի և Եվրոպայի ժողովուրդների նկատմամբ: Նա, օրինակ, 1848 թ. արձագանքել է Դալիցիայում տեղի ունեցող հեղափոխական ղեկավարին և համակրական զգացմունքներով է պատկերել ղյուլացիական ապստամբության հաղթանակը: Ղրիմի պատերազմից հետո տեղի ունեցած ժողովրդական շարժումների կապակցությամբ նա գրեց բանաստեղծություններ, որոնք սիրով են համակված մի ժողովրդի հանդեպ, որն իր արյունն էր թափել 1853—1855 թթ. պատերազմում:

Շեչենկոն ուրախությամբ ու ողևորությամբ է անդրադարձել կիրգիզական ժողովրդի, նրա կենցաղի, հավատալիքների ու պոեզիայի հարցերին: Մեծ թվով նկարները, բնանկարներն ու կենցաղային նկարները, որ ստեղծել է նա հակառակ ցարական արգելքի, խոսում են նրա խորն ու անկեղծ հետաքրքրության մասին ցարական Ռուսաստանում ծանր վիճակի դատապարտված այդ ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Աքսորված լեհ հեղափոխականների հետ ունեցած բարեկամությունը ավելի ուժեղացրեց Շեչենկոյի համակրանքը ղեկի սլավոնական աշխարհի ժողովուրդները:

Պետերբուրգում Շեչենկոն բնդդրվել է 60-ական թվականների ուսու հեղափոխական ղեկավարների փառուսպանծ պլեադայի մեջ: Այդ բարեկամությունն ու համախոհությունը խորհրդանշում էին իրենց ազատագրման համար պայքարող ուսու և ուկրաինական ժողովուրդների շահերի միասնությունը: Շեչենկոյի քաղաքական իդեալը այդ շրջանում խորացավ և դժագրվեց ավելի պարզորոշ կերպով: Կյանքի վերջին տարիներին Շեչենկոն ղեկավարվածական ստեղծագործության վերելք ապրեց: Նրա ստեղծած գործերը խոր, զաղափարական-ղեկարվածական, բնդհանրացումներ ունեցող երկեր են: Կերպարների (ինչպես օրինակ՝ ղեկավարիստ-առաքյալների և նրանց հակադրված բռնակալ ցարերի խարազանված կերպարների) հաստատությամբ ու ավարտվածությամբ, զգացմունքների հարստությամբ և հուզիչ քնարերգությամբ լի ինքնատիպ բանաստեղծություններով Շեչենկոն հաստատեց ժողովրդական բանաստեղծի իր համբավը, որը բնդունեցին Ն. Դորբոյուրովը, Ա. Գերցենը, Գ. Պլեխանովն ու Մ. Գորկին:

Բանաստեղծը 60-ական թվականներին պայքարել է սոցիալական այնպիսի իդեալների համար, որոնք համամարդկային էին: Նրա երազանքն էր սոցիալական հավասարությունը, կյանքը՝ «առանց ծառայի ու ախրոջ», ազատ ժողովուրդների եզրայրությունը: Հասարակական վերելքի տարիներին Շեչենկոն առանց տատանման խոսում է ճշմարտության և ազատության վերջնական հաղթանակի մասին, որոնք մարդկանց երջանկություն կրերեն: «Հետաքրքրական է նշել, — ասում է Մաքսիմ Ռիսկին, — որ «երկրի վրա ճշմարտության» ղալիք հաղթանակի հավատը Շեչենկոյի մոտ, շնայած նրա տանջալից կյանքին, տարիների բնթացքում ղնալով ամրապնդվեց: Եթե երիտասարդական տարիներին նա ղեռնա հավատում էր անցյալի «ոսկե ղարին», ալա հետագայում այն փոխարինվեց ալաղայի «ոսկե ղարի» հավատով, ոսկե ղար

որը կգա, երբ վերջնականապես կոշնչացվի ցարական ճորտատիրական հասարակադրը»³։ Շեչենկոն գրել է.

Եվ արդարություն կլինի՝ մաքղանց մեք...
Կրկին... Քե՛ս և՛ հուս՛ք արեգակի
Կերպենի պղծ աւրի՛քն ալսաւրի՛քի։

(Խարզմ. ... Սարյանի)

Շեչենկոյի քաղաքական պոեզիան 1860-ական թվականներին ներհոսեց հասարակական ազատագրական շարժման մեջ և նպաստեց ոչ միայն ուկրաինական, այլև ողջ գրականության՝ զարգացմանը։ Մեծ Կորգարի ստեղծագործության համառոտական նշանակությունը գիտակցվեց ժամանակակիցներից շատերի կողմից։ Այսպես, Ն. Պ. Օգարյովը «XIX դարի ռուսական գաղտնի գրականությունը» ժողովածուի նախաբանում (1861), որպես անվիճելի փաստ՝ նշեց Շեչենկոյի ճանաչումը համառոտական գրականագետների շրջանում. «Շեչենկոն ժողովրդական է Փոքր Ռուսիայում, հիացմունքով բնորոշված է, որպես յուրային ողջ գրականության մեջ. նա մեզ համար հարազատ դարձավ»⁴։ Զերնիշևսկին և այդ շրջանում նրա մերձակից առաջադեմ գործիչները առանց տատանման Շեչենկոյին դասեցին Պուշկինի և Միցկևիչի շարքը, որպես սլավոնության մեծագույն բանաստեղծի և համաշխարհային նշանակություն ունեցող բանաստեղծ հումանիստի։ Համամարդկային միասնության պալափարը, որով ոգևորված էր Շեչենկոն և որով համակված էին նրա նշանավոր բանաստեղծությունները (մասնավորապես «Յան Հուս» պոեմը) նրան սլավոնական աշխարհի բանաստեղծի համբավ բերին։

Շեչենկոյի մեծության մասին Ա. Վ. Լուինաչարսկին ասել է. «Մեծ է Շեչենկոն, որպես ուկրաինական ազգային բանաստեղծ, բայց նա ավելի մեծ է, որպես ժողովրդական բանաստեղծ, և էլ ավելի մեծ է նա, որպես իսկական ունույնացիոն բանաստեղծ... Որե՛նք երկրի, որե՛նք ազգի համար չկա ավելի մեծ փառք, քան ինչ-որ բան ստեղծել համայն մարդկության համար։ Շեչենկոյի շնորհիվ ուկրաինական հոգու զանձերը, որպես ջրառատ գետեր, լցվեցին մարդկային մշակույթի բնդհանուր հորձանքի մեջ, որը հոսում է գեպի պայծառ ապագան»⁵։

Անսահման սերը հասարակ ժողովրդի նկատմամբ, ժողովրդին ձնշողների ցասումնալից մերկացումը, երազանքը երջանիկ հասարակարգի մասին և ժողովրդի հզոր ուժերի նկատմամբ ունեցած հավատը մոտ ու հասկանալի են բոլորի համար։ Շեչենկոյի ստեղծագործությունների կենսահաստատ ուժը գերում է նաև մեզ՝ նրա հեռավոր սերունդներին։ «Ուկրաինական ժողովրդի մեծ զավակը, — գրել է Կ. Ս. Ստանիսլավսկին, — վեր ելավ պոեզիայի ճաճանչող բարձունքները, նրա ջերմ սիրտը զարկում էր Ռուսաստանի լավագույն մարդկանց սրտի համազարկերով, մարդիկ, որոնք երազում էին ժողովրդի համար ստեղծել ոսկյա և երջանիկ օրեր։ Շեչենկոյի գրվածքները դարեր կապրեն և հավիտյանս կզարթնեցնեն մարդկանց սրտում ազնիվ ու մեծ զգացմունքները»։

³ Максим Рыльский. Классики и современники. Гослитиздат, М., 1958, էջ 221.

⁴ «Русская потаенная литература XIX века», ч. I, Лондон, 1862, էջ 95.

⁵ А. В. Луначарский. Статьи о литературе. М., 1957, էջ 139.

Շեչենկոյի տրադիցիաները ոգևորում ու ջերմացնում են մեր ժամանակների պոեզիան: Շեչենկոյի տրադիցիաների արգասավորության, սովետական պոեզիայում նրանց առկայության մասին Ն. Ռիլենկովը գրել է. «Եվ մեզ մոտ պուշկինյան և նեկրասովյան տրադիցիաների կողքին կարելի է հաշտնարե՛րել շեչենկոյական հոսանք, թվում է, թե իրար ամենևին չնմանվող այնպիսի բանաստեղծների մոտ, ինչպիսիք են Նիկոլայ Ասեն և Դեմյան Բեզին, Ալեքսանդր Տվարդովսկին ու Էդուարդ Բադրիցկին, Բորիս Կոռնիլովն ու Պավել Վասիլևը»⁶:

Սովետական ժողովուրդների մեծ րնտանիքը այն «ազատ, նոր րնտանիքն է», որի մասին երազել է անմահ Կորզարը: Նրա ոգևորված բանաստեղծական խոսքը չի մոռացվել, նա այսուհետև ևս կծառայի հասարակական պայծառ զաղափարների համար մղվող պայքարին, ոոս և ուկրաինական դրականությունների միավորմանը, ամբողջ աշխարհի ժողովուրդների միջև բարեկամության ու եղբայրության հարատևելու մեծ գործին:

⁶ Н. Р ы л е н к о в. Наследники Тараса. Литературная газета, 1961, № 31, страницы 11-